ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ—ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ

Սուրբ Էջմիածնում, նրա շիրմաքարի վրա, փորագրված է «Պաշտպան հայրենյաց»: Այս երկու բառի մեջ մեծ խորհուրդ կա: Հիրավի, հայ ժողովրդի պատմության ամենաբախտորոշ շրջաններից մեկում Ներսես Աշտարակեցին կարողացավ տեսնել այն հնարավոր ուղիները, որ կարող էին փրկել երկիրը հայրենյաց: Նրա գործունեության համազգային արժեքն ամենից առաջ այն է, որ 19-րդ դարի սկզբին, երբ դեպի հարավ Ռուսաստանի առաջխաղացումն նոր հորիզոններ էր խոստանում, նա շարունակեց 18-րդ դարի հայ ազատագրական շարժման նշանավոր երախտավորների՝ Իսրայել Օրիի և Եսայի Հասան-Ջալալյանի, Հովսեփ Արղությանի և Լազարյանների քաղաքական ուղեգիծը, մի ուղեգիծ, որն, ինչպես հայտնի է, կողմնորոշված էր դեպի Ռուսաստան:

Ներսես Աշտարակեցին (Թորոս Շահազիզյան) ծնվել է 1770 թվականի փետրվարի 15-ին, Աշտարակ գյուղում, Հարություն քահանա Շահազիզյանի ընտանիքում: Ութ տարեկան էր, երբ ծնողները նրան տվին Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցը: Պատանի Թորոսը վտիտ էր, կարճահասակ, բնավորությամբ՝ աշխույժ, հնարամիտ, աշխատասեր, ընթերցասեր, զարմանալի հիշողության տեր: Ժամանակակիցները պատմում են, որ վերոհիշյալ արժանիքները նա կարողացավ պահպանել մինչև իր կյանքի վախճանը:

1791 թվականին, 21 տարեկանում, նա ձեռնադրվում է սարկավագ, իսկ 1794 թվականին վարդապետ՝ Թորոս անունը փոխելով Ներսեսի: Իր բուռն խառնվածքով, անսպառ եռանդով, բնական սուր խելքով նա մեծ տպավորություն էր թողնում շրջապատի վրա: Այդ տարիներին նա զանազան կրոնաեկեղեցական հանձնարարականներով ուղարկվում է Զմյուռնիա, Մոլդավիա, Վալախիա, Կ. Պոլիս, իսկ 1799—1807 թվականներին՝ Թիֆլիս, Հյուսիսային Կովկաս և Հարավային Ռուսաստան (Օդեսա, Բեսարաբիա, Նոր Նախիջևան): 1808 թվականին Ներսես Աշտարակեցին ձեռ-

նադրվում է եպիսկոպոս: Նա 19-րդ դարի առաջին երևանամյակի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ Հայաստանում և բովանդակ Անդրկովկասում տեղի ունեցած բոլոր էական իրադարձությունների կենդանի վկան ու գործուն մասնակիցն էր՝ նպաստելով հատկապես ռուսական բանակների պարենավորմանը, կամավորական խմբերի ու գաղթականական գործի կազմակերպմանը և նորագրավ վայրերի կառավարմանը:

Ուշագրավ է ռուս վիրավոր զինվորների նկատմամբ խնամք տանելու վերաբերյալ գեներալ Գուդովիչի 1808 թվականի նոյեմբերի 21-ի խնդրանքին Ներսես Աշտարակեցու պատասխանը. **«Գրելով ոչ թե կամենում եմ Ձերդ պայծառափայլությանը հայտնել մեր ծառայության մասին, այլ ցանկանում եմ տեղեկացնել, որ Էջմիածնի Սուրբ Աթոռը մշտապես ջերմեռանդ է եղել ամենայն Ռուսաց կայսրության ամենաողորմած Աթոռի, նրա զորապետների ու զորքի նկատմամբ: Եվ ոչ մի դեպքում, ոչ մի ժամանակ չի խնայել ու երբեք չի խնայելու իր հավատարիմ ու կարելի ծառայությունը [մատուցել] Կ(այսերական) Մ(եծությանը)»**[1]:

Կաթողիկոսական գահի համար Դավիթ-Դանիելյան պայքարի ընթացքում և դրանից անմիջապես հետո Ներսես Աշտարակեցու հեղինակությունն այնքան էր մեծացել, որ Էջմիածնում նրա մնալը այնքան էլ հաճելի չէր բարձր հոգևորականության և նույնիսկ իր իսկ գործուն աջակցությամբ կաթողիկոս դարձած Եփրեմ Ա Զորագեղցու համար:

1814 թվականին, մոտ 44 տարեկան, արդեն արքեպիսկոպոս, Ներսես Աշտարակեցին ստանձնեց Վրաստանի և Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդությունը: Այդ նշանակումը պատահական չէր: Այն մեծ մասամբ հետևանք էր կաթողիկոսի և միաբանության՝ դեպի Ներսես Աշտարակեցին առաջացած սառնության[2]: Թե ինչից էր առաջացել այդ սառնությունը, դյուրին է նկատել անգլիացի հոգևորական Հենրի Մարտինը: **«Եկեղեցին այս,**—գրել է նա «Անցք ի սուրբ Էջմիածին յամին 1812 ի 12 ամսեան սեպտեմբերի» հոդվածում,— **կամ ավելի լավ է ասել ամբողջ հայոց ազգը այստեղի արքեպիսկոպոսներից մեկի՝ Ներսեսի իշխանության տակ են, քանի որ Եփրեմ կաթողիկոսը անվանական է և ամբողջ տարին հիվանդ՝ գամված անկողնուն: Երեք տարի առաջ Ներսեսին հաջողվեց կազմակերպել ինչ-որ գործ, որն էր՝ Եկեղեցու գրոծերի ու հարկերի կառավարման համար հաստատել Սինոդ 8 եպիսկոպոսներից: Բայց ինքը դարձել է ինքնիշխան»**[3]:

Ալ. Երիցյանը պատմում է, որ եղել են նաև շշուկներ, թե Սինոդն էլ միայն անունով է Սինոդ, քանզի նա խաղալիք է բոլորից կրտսեր, բայց ամենից եռանդուն եպիսկոպոսի՝ Աշտարակեցի Ներսեսի, ձեռքում, որ նա ինչ ուզում, այն էլ անում է, և ոչ ոք չի կարող նրան ընդդիմանալ, այնպես որ «կաթողիկոս, Սինոդ և Էջմիածին—ասել է մի Ներսես»[4]: Ուշադրության արժանի է նաև Լեոի հայտնած այն տեսակետը, թե «Դանիելականության վերջնական հաղթանակից հետո Ներսեսի անսահման փառասիրությունն

---

[1] Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 20, վավերագիր 227:

[2] **Երիցյան Ալ.**, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայքը 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 72:

[3] **Մսերեանց Մսեր**, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, ի Մոսկոու, 1876, էջ 178:

[4] **Երիցյան** Ալ., նշվ. աշխ., էջ 70:

այլևս չէր կարող բավարարություն գտնել Էջմիածնի անձուկ միջավայրում, ուր տիրում էր նրա ամբողջ արտից ատած պարսկական իրականությունը: Թեև ողորմելի Եփրեմ կաթողիկոսն առանց նրա խնամակալության, ինչպես ասում են, «յոթը կորածներից» մեկն էր, բայց և այնպես, նա չկամեցավ նստել այդ հիվանդ ու թուլամորթ ծերունու կողքին, այլ ինքն ընտրեց Թիֆլիսն իր պաշտոնավարության տեղ, ուր կարող էր մոտ լինել ռուսաց կառավարությանը, որին ծառայում էր մեծ անկեղծությամբ և ոգևորությամբ՝ շտապելով օր առաջ իրականացնել Էջմիածնի Աթոռի և առհասարակ Արարատյան ամբողջ աշխարհի կցումը Ռուսաստանին»[5]:

Սինոդի անդամությունից ազատվելու Ներսեսի հրաժարական դիմումը սկզբում Եփրեմ կաթողիկոսը չի ընդունում, բայց նրա բացակայության ժամանակ (Աշտարակեցին գտնվում էր Երևանում), երբ բարձրագույն խորհուրդը վճռում է նրան նշանակել վրացահայերի հոգևոր առաջնորդ, հաճույքով համաձայնում է: Աշտարակեցու համաձայնությունից ուրախացած՝ կաթողիկոսը ետ է կանչում Աստվածատուր արքեպիսկոպոսին և տեղը նշանակում Ներսես Աշտարակեցուն[6]:

Թիֆլիս մեկնելուց առաջ երկու հանգամանք վհատեցնում էին նրա սիրտը: Առաջինը՝ հայ հոգևորականության աղաղակող տգիտությունը և երկրորդ՝ իբրև այդ տգիտության արդյունք, այն իշխանական մեծամտությունը, որ հոգևորականությունը տածում էր Թիֆլիսի հայ համայնքի հասարակական-հանրային գործերի նկատմամբ: Թիֆլիսում Աշտարակեցին անողոք կռիվ հայտարարեց հայ հոգևորականների և աշխարհիկ մեծամեծների կենցաղային ախտերին և անբարոյականությանը: Սակայն, պայքարելով ժողովրդի սնոտիապաշտության դեմ, Ներսեսը նախանձախնդիր էր, երբ նույն այդ ժողովրդի իրավունքները ոտնահարում էին Թիֆլիսի հայ և օտար իշխանավորները:

Թիֆլիսյան գործունեության հենց առաջին քայլերից Ներսեսն ընդհարվում է քաղաքի հայության հին ավանդական ինքնավարության հետ՝ հանձին Թիֆլիսի մելիքի, որ այն ժամանակվա իշխան Դարչի Բեհբուդյանն էր: Վերջինս թեև վրաց կառավարության ժամանակ զրկվել էր իր վայելած բազում իրավունքներից, բայց և այնպես դեռ բավականաչափ հեղինակության տեր էր հայ համայնքի ներքին գործերում, մանավանդ այնտեղ, ուր հարցը վերաբերում էր Եկեղեցուն և եկեղեցականությանը: Ինքնակամ և խստաբարո Դ. Բեհբուդյանը Ներսեսի մեջ գտնում էր իրենից ոչ պակաս համառ իշխանավորի, ուստի սպասվող պայքարն իր օգտին լուծելու նպատակով նա թիֆլիսահայերի հավաքական դիմումներ է կազմակերպում՝ դրանք հասցեագրելով Եփրեմ կաթողիկոսին: Գործին ի վերջո միջամտում է Կովկասի կառավարիչ գեներալ Երմոլովը, որի կողմից կազմված հանձնաժողովը որոշում է՝ առաջին, աշխարհականներն իրավունք չունեին խառնվելու հոգևոր վարչության գործերի մեջ, երկրորդ՝ Ռուսաստանում գործող կարգի համաձայն նրան կցված Վրաստանի վարչական կենտրոն Թիֆլիսում ևս արգելվում է հավաքական խնդրագրեր ներկայացնելը:

---

[5] **Լեո,** Երկերի ժողովածու, չորրորդ հատոր, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1984 թ., էջ 399:

[6] **Կ. Հովհաննիսյան,** Արևելյան Հայաստանի ազատագրական շարժման պատմությունից, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1981, էջ 25;

Ն. Աշտարակեցու կատարյալ այս հաղթանակը Է՛լ ավելի բարձրացրեց նրա հեղինակությունը: Թիֆլիսի հայ գաղութն սկսում է ձեռք բերել ղեկավարող, հրահանգող և ուղղություն տվող կենտրոնի նշանակություն: Ավելին, ռուսական կառավարության համար Եփրեմ կաթողիկոսը մղվեց երկրորդ բնագիծ, քանզի Էջմիածնի վերաբերյալ ռուսաց տերության բոլոր բանակցությունները Ներսեսն էր վարում: Թողնելով Էջմիածինը՝ Ներսես Աշտարակեցին չդադարեց մտածել Մայր Աթոռի և Արարատյան աշխարհի մասին, չնայած, ինչպես երևում է Հովակիմ Լազարյանին՝ Եփրեմ կաթողիկոսի հղած կոնդակից, նա նշանակվել էր Վրաստանի, Ելիզավետպոլի, Շուշու, Նուխու, Բաքվի, Շաքիի, Շամախու և Դերբենդի հայկական թեմերի առաջնորդ: Բացառիկ կարևոր է այն դերը, որ խաղացել է Ներսես Աշտարակեցին անդրկովկասյան հայերի մշակութային և կրթական կյանքում: Նրա անվան հետ է կապված Էջմիածնի Ժառանգավորաց ուսումնարանի վերաբացումը 1813 թվականին: Ներսեսը նպատակ ուներ այն դարձնել խոշոր ու բարեկարգ ուսումնական հաստատություն, սակայն իր այդ մտադրությունը բազում պատճառներով նա չկարողացավ իրականացնել:

Երբ Ներսես Աշտարակեցին նշանակվեց Վրաստանի թեմի առաջնորդ, սկզբից ևեթ ծրագրել էր Թիֆլիսում հիմնել մի ուսումնարան: Այդ նպատակով էլ Թիֆլիսի վանքամերձ «Կոշկ» կոչված խուցերում 1815 թվականին նա բացեց մի փոքրիկ դպրոց (թվով 20 երեխաների համար): Ի դեպ, մինչև Ներսիսյան դպրոցի բացվելը այստեղ են սովորել Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանը, Առ. Արարատյանը:

Ներսես Աշտարակեցու թիֆլիսյան գործունեության փառապսակը 1824 թվականի դեկտեմբերի 24-ին բացված Ներսիսյան դպրոցն է (ի միջի այլոց պետք է ասել, որ հայ աշակերտների հետ միասին դպրոցում սովորել են նաև վրացի, թաթար, հույն ու հրեա երեխաներ): Եվ պատահական չէ, որ 1826 թվականի փետրվարի 24-ին, աշակերտների պարգևաբաշխության տոնահանդեսի ժամանակ, վրացազգի իշխան գեներալ Օթար Ամիլախվարը դպրոցին է նվիրում Սողանլուխի իր մեծ այգին: Մոտենալով Ներսես Աշտարակեցուն՝ իշխանն ասում է. «Դու իմ հայրենիքում մեծ լապտեր վառեցիր...»[7]:

Ներսիսյան դպրոցում կրթությունը ձրի էր: Բացի քաղաքի հմուտ ուսուցիչներից, Ն. Աշտարակեցին դպրոցում դասավանդելու հրավիրեց Թավրիզից՝ պարսկագետ Բեդրեհեմին, Փարիզից՝ հայոց լեզվի դասատու և գիտնական Հակոբ Զահան Զրպետյանին և Մոսկվայի Լազարյան Ճեմարանից՝ բանաստեղծ Հարություն Ալամդարյանին, որին և հանձնվեց ուսումնարանի տեսչությունը: Այստեղ դասավանդել սկսեց նաև հայագետ Պողոս Վարդապետը:

Զարմանալի եռանդով ու համերաշխ էր գործում գիտնական ուսուցիչների այդ խումբը 1824—1829 թվականներին, որը Ներսիսյան դպրոցի պատմության մեջ սովորաբար կոչվում է «Դար Ալամդարյանի»: Ի դեպ, մի հայտնի չափով դպրոցի հմայքն ընկավ՝ Ներսես Աշտարակեցուն 1828 թվականին Քիշինև, իսկ Հարություն Ալամդարյանին՝ 1830 թվականին Հաղպատ աքսորելուց հետո: Այդ շրջանից սկսած, շուրջ 10 տարի, դպրոցը չունեցավ երբեմնի ո՛չ վերահսկողության աչալրջությունը, ո՛չ ուսուցիչների համերաշխ եռանդը և ո՛չ էլ աշակերտների ջանասիրությունն ու առաջադիմությունը:

[7] «Գարուն» ամսագիր, 1970 թ., թիվ 12, էջ 66;

Տարբեր ժամանակներում Ներսիսյան դպրոցում դասավանդել են նաև Արզանյան եղբայրները, Գաբրիել, Միքայել և Ռաֆայել Պատկանյանները, Ավ. Արասխանյանը, Գաբրիել Սունդուկյանը, Գաբրիել Խատիսյանը, նկարիչ Ստ. Ներսիսյանը և շատ ուրիշներ: Ներսիսյան դպրոցում հայ ուսուցիչների հետ միասին աշխատել են ռուս, վրացի, ֆրանսիացի ուսուցիչներ (Սոկոլով, Զելինսկի, Սախանսկի, Սպասկի-Ավտոնոմով, Բոգոյավլենսկի, Մոնաստիրսկի, Պերեյրա, Էսսելիանի և ուրիշներ):

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը Անդրկովկասի առաջին խոշոր ուսումնական հաստատությունն էր և առհասարակ 19-րդ դարի լավագույն դպրոցներից մեկը: Չնայած իր հոգևոր անվանը, բացի կրոնից, դպրոցում հիմնականում դասավանդվում էին աշխարհիկ առարկաներ՝ պատմություն, գրականություն, ֆիզիկա, թվաբանություն, հանրահաշիվ, տրամաբանություն, նկարչություն, իսկ լեզուներից՝ հայերեն, ռուսերեն, պարսկերեն և ֆրանսերեն: Հայ մանկավարժներից՝ գիտության, գրականության, արվեստի, հասարակական-քաղաքական մտքի ականավոր դեմքերից շատերը (Արշակ Ագապյան, Շերմազան Վարդանյան, Գյուտ Աղանյան, Պետրոս Մադաթյան (Սեյադ), Ղազարոս Աղայան, Միհրդատ Ամերիկյան, Սարգիս Բեկնազարյան, Ալեքսանդր Երիցյան, Երվանդ Լալայան, Պերճ Պռոշյան, Գրիգոր Տեր-Մելիքսեդեկյան, Գևորգ Աբովյան, Մուշեղ Բագրատունի, Դերենիկ Դեմիրճյան, Հովհաննես Թումանյան, Անաստաս Միկոյան, Հայկ Բժշկյան (Գայ) և շատ ուրիշներ) եղել են Ներսիսյան դպրոցի սաները:

Ներսես Աշտարակեցու անմիջական նախաձեռնությամբ էր դարձյալ, որ Գևորգ աղա Արծրունին 1826 թվականին Թիֆլիս փոխադրեց Ամստերդամի հայկական եկեղեցում պահվող Ոսկանի և Վանանդեցու տպարանը, այն նշանավոր տպարանը, որ հայ մշակույթի մի այլ երախտավորի՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ջանքերով բացվել էր Ամստերդամում, 1664 թվականին:

Շատ են Ներսես Աշտարակեցու ջանքերի շնորհիվ հայ ժողովրդի ազգային-մշակութային գործի բարեփոխման ուղղությամբ կատարված ձեռնարկները. բոլորը չես թվարկի: Սակայն ինչպիսի ազգանվեր գործով էլ զբաղվեր Ներսեսը, միևնույն է, նրա կյանքի գերնպատակը հայրենիքի ազատագրության իդեալի իրագործումն էր, որ պետք է, նրա խորին համոզմամբ, իր վերջնագծին հասներ Անդրկովկասում ռուսական առաջխաղացման շնորհիվ:

Ռուսաստանի օգնությամբ հայրենի երկրի ազատագրման ակնկալություն ունեցող նշանավոր այս գործչի մեջ կարծես խտացել էին ողջ արևելահայերի խոհերն ու ձգտումները, երազանքներն ու ցանկությունները: Ներսես Աշտարակեցին շատ լավատեղյակ էր նախապես ֆրանսիական, իսկ հետագայում՝ անգլիական դիվանագիտության ձգտումներին՝ բոլոր միջոցներով խոչընդոտել ռուսների գործողություններին Անդրկովկասում, թույլ չտալ հատկապես գալիք բախումների ժամանակ Երևանի և Նախիջևանի խանությունների միակցումը Ռուսաստանին: Սակայն արևմտաեվրոպական ճարպիկ դիվանագիտությանը չհաջողվեց Ներսեսին ներքաշել իր խարդավանքների ծուղակը: Վրաստանի ռուս կառավարիչները խորապես զգում էին ռուսական գահի նկատմամբ Ներսեսի հավատարմությունը, նրա անսասան հավատը ռուսների կողմից հայրենի երկիրն ազատագրելու խընդրում, որը մշտապես հորդորում էր իր հոտին երբեք չշեղվել ռուսական կողմնորոշման ճշմարիտ ուղեգծից:

1816 թվականի հուլիսի 15-ին Ալեքսանդր Առաջինը ստորագրում է Ներսես Աշտարակեցուն Սուրբ Աննայի առաջին աստիճանի շքանշանով պարգևատրվելու վերաբերյալ հրովարտակը: Բարձրագույն այդ պարգևին նա արժանանում է նաև 1818 թվականի հուլիսի 15-ին:

Ներսես Աշտարակեցին աշխույժ գործունեություն է ծավալում հատկապես գեներալ Ալեքսեյ Երմոլովի՝ Կովկասի կուսակալ և Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար եղած ժամանակ:

Ուշագրավ է 1816 թվականի հուլիսի 8-ին կաթողիկոսին գրած Ն. Աշտարակեցու նամակը, ուր Երմոլովի դեսպանության Պարսկաստան մեկնելու կապակցությամբ գրում է. **«Նոր կուսակալն առանց կարծեաց գայ այդր ի գնալն առ շահն և արժան է ունել վասն նորա զարժանաւոր նախահոգիութիւն վասն ընդունելութեան ըստ տեղւոյն, ըսկ կերակրոյն ըստ մրգեղենաց...»**[8]: Բնավորությամբ անհանգիստ Ներսեսը չի բավարարվում լոկ դրանով: Մինչև Պարսկաստան մեկնելը, նա հանդիպում է Երմոլովին, մանրամասն պատմում Էջմիածնի ծանր կացության ու Աթոռի նկատմամբ գործադրվող տնտեսական ու քաղաքական բռնությունների մասին, միաժամանակ խնդրում այցելել Էջմիածին, սեփական աչքերով տեսնել Աթոռի վիճակը, իսկ պարսկական արքունիքում եղած ժամանակ խոսել նաև այդ հարցի մասին[9]:

Պարսկաստան մեկնող Երմոլովի դեսպանությունը, հիրավի, ջերմորեն է հյուրընկալվում Էջմիածնում: Այդ մասին դեսպանի օրագրում արձանագրված է. **«1-ը մայիսի: Էջմիածին՝ հոգևոր Մայր Աթոռ: Վանքից 5 վերստ հեռու ինձ դիմավորեց հինգ եպիսկոպոս, որոնք ձիերից իջնելով, շնորհավորեցին իմ գալուստը: Որից հետո, ավելի քան մեկ վերստի վրա երևաց ինքը՝ կաթողիկոսը: Ես իջա ձիուց, նա՝ նույնպես, որքան էլ ես չցանկացա այդ: Վանքի դռան մոտ տեսա հոգևորականներ՝ խաչերով, շքեղ հագուստներով: Երգեցողության ու զանգերի ղողանջների ներքո ուղեկցեցին ինձ հատկացված սենյակը: Ես ցանկանում էի ուղիղ վանք գնալ, բայց կանխամտածված չարեցի այդ, որովհետև չցանկացա ինձ հետ տանել պարսիկ ամբոխին, որը ոչ մի հարգալից վերաբերմունք չի ցուցաբերում մեր սրբությունների նկատմամբ:**

Ես իմացա, որ այնտեղ շատ լրտեսներ կան, որոնք հետևում են կաթողիկոսին՝ ցանկանալով իմանալ մեր հարաբերությունների մասին: Դա մեր նկատմամբ անվստահության առաջին արտահայտությունն էր, որ պարսիկները չկարողացան թաքցնել:

2-ը մայիսի, Էջմիածին: Պարսիկ չինովնիկները պնդում էին, որ առանց հանգստանալու, անմիջապես գնայի Երևան, բայց ես մնացի Համբարձման տոնին՝ լսելու պատարագն ու աղոթքները: Կաթողիկոսը շատ լավ ճառ արտասանեց, որում Աստծո օրհնությունը ցանկացավ միապետ կայսեր կողմից իմ վրա դրված պարտականությունների կատարման գործում: Մենք բոլորս նկատեցինք, որ երբ կաթողիկոսը հիշատակեց միապետի անունը, բոլորը անմիջապես բարձրաձայն արտասանեցին շահի անունը, որպեսզի պարսիկները լսեին, այլապես տուժի կենթարկեին, իսկ դրանից ազատվելու համար նրանք խոշոր գումար էին պահանջում»[10]:

[8] Մաշտոցի անվան Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 29, վավերագիր 61:

[9] Տես **Կ. Հովհաննիսյան,** Արևելյան Հայաստանի ազատագրման շարժման պատմությունից, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1981, էջ 29:

[10] ЦГИА СССР, Ф, 1018, оп. 2.

Երմոլովի դեսպանագնացության նպատակն էր՝ բանակցությունների միջոցով կարգավորել տարածքային և սահմանային վեճերը, որոնք առաջացել էին 1813 թվականին Գյուլիստանի պայմանագրի առնչությամբ, սակայն ռուսական առաքելության փորձերն այդ ուղղությամբ ապարդյուն անցան:

Երմոլովի բանակցությունների արդյունքներն, անշուշտ, հետաքրքրում էին Ներսես Աշտարակեցուն: **«...Թեպետ ո՛չ հաշտության և ո՛չ էլ խռովության վերաբերյալ լուրեր չեն գալիս,**—հարում է նա սեպտեմբերի 21-ին Հովակիմ Լազարյանին գրած իր նամակում,— **սակայն արտահայտված կարծիքներից և եղած նշաններից ելնելով, ես մեծ հույսեր ունեմ, որ տիրոջ գործակցությամբ Նորին Կայսերական մեծության հովանավորությունը ամենայն զորությամբ կտարածվի մեր հայրենակիցների վրա»**[11]:

Ն. Աշտարակեցին գտնում էր, որ Արևելյան Հայաստանի ազատագրումը անհնար է խաղաղ ճանապարհով: Նման տրամադրությամբ էին համակված շատերը: **«Երևանի բնակիչները ոչ մի կերպ չէին հավատում,**—իր օրագրում այդ է հաստատում Երմոլովի դեսպանության անդամներից Մուրավյովը,— **որ մեր և Պարսկաստանի միջև հաշտություն կա: Նրանք սպասում են մեր զորքերին և անհամբեր ակնկալում, թե մենք երբ իրենց կազատենք պարսկական լծից»**[12]:

1826 թվականի հունիսի 16-ին ճայթեց ռուս-պարսկական երկրորդ պատերազմը: Պատերազմի առաջին իսկ օրից Ն. Աշտարակեցին եռանդուն գործունեություն ծավալեց: Կրակոտ շրջաբերականներով նա ոգևորում էր անդրկովկասյան հայերին, կամավորական ջոկատներ կազմակերպում և նրանց գլուխն անցած՝ նետվում մարտերի մեջ: Իբրև ակնկալություններով ու հույսերով ապրող անդրկովկասյան հայերի քաղաքական առաջնորդ, Աշտարակեցին մարտական հորդորներ էր անում և կոչեր արձակում ժամանակակիցներին, ոգեշնչում նրանց, թե մոտալուտ է հայրենի երկրի գարունը: **«Հասավ ժամը,**— կարդում ենք նրա կոչերից մեկում,— **երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազատությունը. հասավ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերականգնի իր վաղեմի անկախությունը. ոտքի կանգնեք, հայոց քաջեր, թոթափեցեք պարսից լուծը, ուրախացրեք ալեզարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցեք հայրենի հողերը և ապա ապրեցեք ազատ... ժամ է արդեն, օ՜ն անդր... հիմա կամ երբեք»**[13]:

Ամուր էր Ն. Աշտարակեցու գործունեության հասարակական պատվանդանը: Հենված այդ պատվանդանի վրա՝ նա գործեց հավատարմությամբ և ինքնամերժ նվիրումով, նա համաժողովրդական մեծարանքի էր արժանացել՝ որպես համաժողովրդական շարժման ճանաչված ղեկավար:

Անցյալ դարի 20-ական թվականներին Ն. աշտարակեցին ո՛չ մարմնացումն էր անձնական տենչանքի և ո՛չ էլ ձգտումը փառքի, այլ խտացումը համաժողովրդական շարժման: Նա արտահայտում էր, Ալ. Երիցյանի բառերով ասած, «պարսից դարավոր բռնակալության» դեմ ազգային պատերազմի ելած արևելահայ ժողովրդի շահերը: Ներսեսի հորդորներով էր, որ

---

[11] Մաշտոցի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 126:

[12] «Русский архив», 1886, кн. вторая, стр. 14.

[13] **Ալ. Երիցյան,** Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 238:

«...Կուրի եզերքից մինչև Արաքսի ափերը Հայք՝ հոգևորական և աշխարհական, կին ու տղամարդ, մեծ ու փոքր ամենքը աշխատում էին մասնակից լինել այդ կռվին»[14]:

Դեռ այն օրերից մեկում, երբ շարունակում էին որոտալ թնդանոթային համազարկերը, և հաղթականորեն հնչում էին պատերազմի շեփորները, Թավրիզը գրավելուց հետո, գնդապետ Ղազարոս Լազարյանի միջոցով Աշտարակեցին առաջարկներ էր անում գեներալ Պասկևիչին՝ Ատրպատականից Արարատյան աշխարհ հայերի ներգաղթման համար գալիք պայմանագրի մեջ հատուկ հոդված ներմուծելու մասին: Ուշագրավ է Լազարյանի պատասխանը: Մանրամասնորեն պարզելով իր տեսակետը Հայաստանի սահմաններն ընդարձակելու և այն պարսկահայերով ու արևմտահայերով բազմամարդ դարձնելու մասին՝ գնդապետը հայտնում էր, որ այդ տեսակետին իրազեկ է «կացուցել» Պասկևիչին՝ գալիք հաշտության բանակցությունների ժամանակ նկատի ունենալու համար:

«Զոր ինչ գրեալ էիք ինձ,— պատասխանում է Լազարյանը,— **վասն սիրելի մեր ազգին և սահմանաց Երևանու՝ ես Նորին բարձր գերազանցութեան վասն այս խոսեալ եմ, որ ասաց ինձ թէ՝ միտքն ու դիտաւորութիւնն իւր կայսերական մեծութեան նոյն է. նա ևս ինքն Նորին բարձր գերազանցութիւնն հետևելոց է այս բանին լաւապէս կատարել: Եւ ես իմոյս կողմանէ ինձ առաջին և սուրբ պարտաւորութիւն կը համարիմ, այն է՝ որ լինիմ օգուտ ազգին մերոյ»**[15]:

Ն. Աշտարակեցին, դեռ պատերազմի եռուն շրջանում, հաղթանակի հանդեպ հավատ էր ներարկում ժողովրդի ամենալայն զանգվածներին և սուր դնում նրանց ձեռքը՝ մարճի ու մանգաղի, մաճի ու համքարական դազգահի, արշինի ու կշեռքի փոխարեն, իսկ վարդագույն ապագայի հույսերով ժողովուրդն ամեն ինչ անում էր՝ դյուրացնելու ռուս բանակների հաղթանակը: Ն. Աշտարակեցին հավաստիացնում էր հայ կամավորներին, թե **«...Ռուսիո օգոստափառ ինքնակալի ողորմած ուշադրությունը պսակներ կհյուսեն թե՛ ձեզ և թե՛ բոլոր ձեր համազգիներին»**[16]: Ընդհուպ մինչև ռուս-պարսկական պատերազմի վերջը, իր ձեռն առած Քրիստոսի խաչն ու ցարի դրոշը, Ներսեսը ռուսական բանակներին ցույց տված իր աջակցության համար բազմիցս արժանացավ ոչ միայն Կովկասյան բարձր հրամանատարության, այլև թագավորի «համակրանքին ու վստահությանը»: 1827 թվականի փետրվարին, Նիկոլայ Առաջինը շնորհակալություն էր հայտնում Ն. Աշտարակեցուն հայ ժողովրդի ցույց տված «եռանդի և անկեղծ հավատարմության» համար և հանձնարարում էր **«հայտնել բոլոր հայերին մեր կայսերական բարյացակամությունը և վստահեցնել մեր կայսերական խոսքով, որ ապագայում էլ դեպի նրանց կշարունակվեն մեր առանձին շնորհները: Քանի ռուսական գահի հովանու ներքո ապահով ապաստարան գտած ձեր ժողովրդի հավատարմությունը կմնա անխախտ, մենք պարտք կհամարենք միշտ ճիշտ հոգ տանել նրա երջանկության և հանգստության մասին»**: Ն. Աշտարակեցու ռուսական կողմնորոշումը բնավ չէր բխում լոկ ռուսահպատակ դառնալու մարմաջից կամ եկեղեցական-վարչական շահախնդրությունից:

---

[14] Նույն տեղում, էջ 257:

[15] Մաշտոցի անվան Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 822:

[16] **Ալ. Երիցյան,** նշվ. աշխ., էջ 243:

ներից: Նա անդրադարձնում էր այն ակնկալությունները, որ առկա էին ժողովրդի ամենատարբեր ծալքերում:

Լեոն գեղեցիկ և միանգամայն իրականության համապատասխանող ձևով է բնութագրել Ն. Աշտարակեցուն և նրա ժամանակը. **«Տասնիններորդ դարի սկզբում, այն խորհրդավոր միջոցին, երբ ժամանակը իր անողոք պահանջներն էր ներկայացնում հայերին, երբ ռուսաց տիրապետությունը նոր, ժպտուն հորիզոններ էր բաց անում, մեր հոգևորականության մեջ երևան եկավ մի նոր հերոս, որ հաջորդեց Հովսեփ Արղությանին և շարունակեց նրա գործը ավելի մեծ եռանդով»**[17]:

Մտնելով ռուսական բանակների շարքերը և խանդավառված հայրենիքը օտարությունից ազատագրելու նվիրական զգացմունքներով՝ հայ կամավորական ջոկատները թշնամու դեմ անձնուրաց կռվի հերոսություն էին ցուցաբերում: Մեզ է հասել նրանց մասին դեկաբրիստ Ն. Ն. Մուրավյովի ուշագրավ մի տեղեկությունը: **«...Նրանք թվապես ուժեղանում էին,**— գրում է աքսորյալ դեկաբրիստը,— **և մեր հանդես գալու պահին, հայկական առաջին դրուժինան, որ հանձնարարված էր Խերսոնյան գնդի ղեկավար սպաներից մեկին՝ պրապորշչիկ Սումբատովին, Ջալալ-Օղլիում 150 հոգով մեզ միացավ և հավատարմության երդում ընդունեց...**

Թվում էր, թե մի նոր ոգի էր թևածում ողջ հայերի մեջ, որոնք հույս ունեին վերականգնված տեսնել իրենց թագավորությունը...»[18]:

Ընդհանրապես Կովկաս աքսորված դեկաբրիստները հակված էին կարծելու, որ ռուսական տիրապետությունը հուժկու խթան կծառայի ազատագրված Հայաստանի տնտեսական ու մշակութային զարգացման համար: Այսպես, ռուս-պարսկական պատերազմի գործուն մասնակից Ե. Լաչինովը 1828 թվականին գրում էր, թե հայերի համար հասել է վերածննդի ժամանակը և հնարավոր է, որ մի քանի հարյուրամյակ անհանգիստ քնից հետո, Հայաստանի համար կրկին շողա գիտության, արվեստի ու գեղարվեստի ծաղկող դարը: Ի դեպ, նշենք, որ Ն. Աշտարակեցին որոշակի կապերի մեջ էր Կովկաս աքսորված դեկաբրիստներից ոմանց հետ (Պուշչինի, Լաչինովի և ուրիշների): Այդ կապերը մի առանձին խորհուրդ են ստանում, եթե նկատի ունենանք, որ Աշտարակեցին լավ տեղյակ էր դեկաբրիստների նկատմամբ գեներալ Պասկևիչի անհուն թշնամանքին, գիտեր նաև, որ նրանց հետ առնչվող կամ բարյացակամ տրամադրված մարդիկ ենթարկվում էին կուսակալի և նրա համախոհների գաղտնի ու բացահայտ հալածանքներին:

Մի ժամանակաշրջան էր դա, երբ Ն. Աշտարակեցին, ժամանակի հայ գործիչները և կամավորական ջոկատները մարտնչում էին Երևանի, Նախիջևանի, Էջմիածնի, Էրզրումի (Կարին), հայկական յուրաքանչյուր գյուղի համար, և նրանցից ամեն մեկը երևակայում էր, թե հաղթանակի կամ պարտության պատճառն իր զենքն է: Մինչդեռ կամավորների գոտեմարտը արտացոլումը չէր այն պայքարի ու նպատակի, որ նրանց գլխավերևում մղում էին ռուս ցարն ու գեներալները՝ հայ ժողովրդի ճակատագիրը որոշելու համար: Կույր հավատի և միամտության պահերը տակավին չէին անցել: Կամավորական շարժման ախոյաններն ու սպասավորները դեռևս չգիտեին, որ իրենք սոսկ արագացնում են դեպի ցարահպատակություն գլորվող հայ

[17] **Լեո,** Ստեփանոս Նազարյանց, առաջին հատոր, Թիֆլիս, 1902, էջ 11:

[8] «Русский архив», 1889, кн. 3, стр. 95—96. Տե՛ս նաև **М. Нерсисян,** Из истории русско-армянских отношений, книга первая, Ереван, 1956, ст. 250—251.

ժողովրդի պատմության անիվը: Եվ դա բնական էր: Խոստացողի և հուսադրողի երբեմնի գործելակերպից չհրաժարվելով՝ ռուսական ցարիզմը այդ պահին էլ ջանում էր կազմակերպել աղերսներով իր օնգությունը հայցող քրիստոնյաների ուժը տարածքային նոր վիրահատումների համար, այն տարբերությամբ միայն, որ Ռուսաստանի հովանավորության ներքո «Հայկական թագավորության» կամ «ինքնավարության» (պետրոսյան և եկատերինյան պատմաշրջաններից եկող խոստումներ) փոխարեն հայերը պիտի բավարարվեին կայսերահպատակ դառնալու մեծագույն շնորհով: Ինչպես 1800-ական թվականների ըմբոստ վրացիները, այնպես էլ 1820-ական թվականների հայ գործիչները, այդ թվում և Ներսես Աշտարակեցին, տակավին հասու չէին այն գիտակցությանը, որ առկա քաղաքական պայմաններում մնում էր հոժարել սեփական թագավորական հեժիմը կամ փադիշահի տիրապետությունը ցարականով փոխարինելու մտքի հետ: Ցարիզմը ոչ միայն վերացրեց Ռուսաստանից վասալական կախվածության մեջ գտնվող վրացական թագավորությունը, այլև դաժան հաշվեհարդար տեսավ բոլոր նրանց նկատմամբ (հիշենք 1812 թվականի Կախեթի ապստամբության ճնշման դաժանությունը), ովքեր չէին «սիրում ներկա կարգերը» և ազգային պետականությունը վերականգնելու համար մարտակոչի էին հրավիրում ժողովրդին: Մի կողմ վանելով պատմության փորձը, գաղափարապաշտ ազգային հայ գործիչները ձգտում էին գտնել այն, ինչ կորցրել էին վրացիները երեք տասնամյակ առաջ: Հետագա իրադարձությունների լույսի ներքո միայն հայ գործիչները կարողացան զանազանել ցարական խոստումների քաղաքական երանգները, ըմբռնել քրիստոնեասիրական կարգախոսների գործնական իմաստը:

Ռուս-պարսկական պատերազմի վերջին պահերին և առանձնապես այն ավարտելուց հետո Պասկևիչը միջոցների խտրություն չէր դնում երկրամասից վտարելու նշանավոր հայ գործիչներին: Միանգամայն մոռացության տրվեցին ռուսական բանակներին մատուցած նրանց ծառայությունները: Ն. Աշտարակեցու գործունեությունն Անդրկովկասում դիտվեց այլևս ավելորդ, քանզի նա իր դերն արդեն կատարել էր ռուսաց քաղաքականության նկատմամբ...[19]:

Թուրքմենչայի 1828 թվականի փետրվարի 10-ի պայմանագրի ստորագրումից ընդամենը երեք շաբաթ անց, մարտի 3-ին, կոմս Դիբիչին հղած իր նամակում գեներալ Պասկևիչը գրում էր, որ ինքը Ներսեսի մասին «շատ դժվարության մեջ» է, որովհետև «քաղաքականությունը (պոլիտիկան) արգելում էր «իրեն» բոլորովին հեռացնել նրան գործերից»[20]: Չսպասելով Դիբիչի պատասխանին, Պասկևիչը «շատ քաղաքավարի կերպով և ամենևին չդիպչելով նրա պատվին» Երևանի ժամանակավոր վարչության անդամությունից ազատեց Ներսեսին, իսկ մայիսի 21-ի թվակիր իր գրությամբ նա հանկարծակիի բերեց հայ ազատագրական շարժման գործչին: 1828 թվականի ապրիլին սկսված ռուս-թուրքական պատերազմում հայերին «ազատագրական» պատերազմի հորդորներ անելու համար Ներսեսը պիտի մեկներ Բեսարաբիա՝ իբրև թեմի առաջնորդ: **«Իսկ ինչ վերաբերում է իմ Բեսարաբիա ուղևորվելու բարձրագույն հրամանին,**— գրում էր մինչև հոգու խորքը վիրավորված Ներսեսը,— **ես իմ պարտքն եմ համարում անձամբ**

[19] Տե՛ս **Ալ. Երիցյան**, նշված աշխ., էջ 355:

[20] **Աբր. Զամինյան**, Հայոց Եկեղեցու պատմություն, մասն Բ, Ն. Նախիջևան, 1909, էջ 155:

տեսնվել Ձերդ պայծառափայլության հետ և ընդունել Ձեր խորհուրդները ի բարօրություն հայոց ազգի»[21]: Պասկևիչն ամեն կերպ աշխատեց չհանդիպել Աշտարակեցու հետ և գրավոր անգամ չուղարկեց նրա հայցած «խորհուրդները»:

«Իմ նպատակն է եղել,— գրում է Ներսեսը հոկտեմբերի 16-ի Պասկևիչին հղած իր վերջին նամակում,— **ծառայել Աստծուն, թագավոր կայսրին և տերությանը, և տրիտուր իմ աշխատանքներին և անձնվիրության՝ աղերսել իմ որբացած ազգի արդար պաշտպանության մասին»**[22]:

Իր պատասխան նամակում «արդարադատ» սատրապը նշում էր, որ կառավարությունը խտրություն չի դնում «հպատակների միջև», ինչպիսի ազգության ու կրոնի էլ նրանք պատկանելիս լինեն, միաժամանակ ավելացնում, որ ինքը բնավ կարիք չունի որևէ մեկի խրատներին՝ նորագրավ երկրի գործերը արդարացիորեն տնօրինելու մասին: **«Ես չեմ հասկանում,**— հարում էր կոմսը,— **թե ինչ պատճառով հայոց ազգին դուք կոչում եք «որբացած»: Այդ բառը կարող է վերաբերվել միմիայն այն հայերին, որոնք գտնվում են պարսկական և օսմանյան իշխանության ներքո, բայց ամենայն ռուսաց մեծ թագավոր կայսրի բոլոր հպատակներն նրան ունեն ընդհանրական հայր և պաշտպան իրենց և, իհարկե, չեն կարող կոչվել «որբացած»**[23]:

Իրողությունն այն է, որ պատերազմի արդյունքներից Ն. Աշտարակեցին չկարողացավ թաքցնել իր դժգոհությունը: Նա ցանկանում էր Պարսկաստանից պոկված տեսնել նաև Մակվի խանությունը, իր անբավարարվածությունն էր հայտնել հայ գաղթականների կարիքների նկատմամբ ցարական չինովնիկության և իր իսկ՝ Պասկևիչի անտարբերությունից: Ավելին: **«Մի քանի անգամ տպագրության մեջ հիշված է և այժմ էլ կենդանի ականատես պատմողներ կան,**— գրում է Ալ. Երիցյանը,— **որ Ներսեսը մինչև իր կյանքի վերջին բոպեն ձախ ծոցի գրպանում մի թուղթ էր պահում, որից չէր բաժանվում գիշեր ու ցերեկ, թե ինչ բովանդակություն ուներ այդ թուղթը, ոչ ոք չգիտեր, որովհետև նա ոչ ոքի ցույց չէր տալիս: Բայց երբ որ Բեսարաբիայից վերադարձավ նա կաթողիկոսական վեհ աստիճանով ու մտերիմների հետ խոսք ու զրույց էր լինում Պասկևիչի և անցած-գնացած անցքերի մասին, ծերունի հայրապետը ձեռքը դնում էր ձախ ծոցի վրա և խորին հառաչանքով ասում՝ «Պասկևիչը ահա այստեղ է կաշկանդված»: Իրա՞վ արդյոք Պասկևիչի գրությունն էր այդ և ե՞րբ կամ ի՞նչ առիթով էր գրված, մեզ հայտնի չէ: Գիտենք միայն, որ այդ մասին տեղյակ էին երկրիս փոխարքաները՝ իշխան Վորոնցովը, Մուրավյովը և իշխան Բարատինսկին: Շատերը հետամուտ էին ձեռք բերելու այդ գրությունը, բայց Ներսեսը հանկարծակի վախճանվեց և թե ապա ո՞ւմ ձեռքն անցավ այդ թուղթը, ոչ ոք չի կարող ասել: Ինչևիցե, բայց եթե իրավ կար այդպիսի թուղթ և այն էլ Պասկևիչի գրած, դա հավանական է, թեև, պնդում ենք, ոչ հաստատ:**

Շատ կարելի է, որ պատերազմն սկսելուց առաջ, փառքերին հետամուտ Պասկևիչը, ինքնագլուխ և առանց բարձրագույն հաճության, որևէ խոստմունք լինի արած Ներսեսին, սրան ավելի ևս ոգևորելու համար: Եթե մի այդպիսի խոստմունք կար, և Ներսեսը պատերազմը վերջանալուց հետո

---

[21] **Ալ. Երիցյան,** նշված աշխ., էջ 365:
[22] Նույն տեղում, էջ 368:
[23] Նույն տեղում, էջ 268:

պահանջում էր դրա կատարումն, ու Պասկևիչը չէր կարողանում կատարել, այն ժամանակ հասկանալի է, թե ինչու էր ապարապետն այնպես գրգռվում և ձգտում հեռացնել նրան Կովկասից»[24]:

Մինչխորհրդային պատմագրության մեջ բազմիցս հիշատակվող «Աշտարակեցու թուղթը», տարաբախտաբար, ցայսօր էլ չի հաստատվում պատմական նմանատիպ նյութերով, բայց միաժամանակ դյուրին չէ ապացուցել, որ այն առասպել է: Քանզի անհերքելի իրողություն է, որ Ն. Աշտարակեցին ուներ ազգային-քաղաքական ավելի մեծ ակնկալություններ, քան ցար Նիկոլայ Առաջինի 1828 թվականի մարտի 21-ի հրամանագրով՝ հայերին պարգևած «Հայկական մարզը» (Армянская область):

Ուշագրավ է ռազմական մինիստր Չեռնիշևի գրությունը Պասկևիչին: Հաշվի առնելով Ներսեսի բողոքները, Նիկոլայ Առաջինը Չեռնիշևի միջոցով հանձնարարում էր Կովկասի իր փոխանորդին՝ առերես հարգանքով վերաբերվել հայ կաթողիկոսի և հոգևորականության այն ներկայացուցիչների հետ, ովքեր կարող են ազդեցություն ունենալ ժողովրդի վրա, և հետևապես, դրանով կանխել Ռուսաստանին նոր միակցված ժողովրդի հուզումների ամեն մի հնարավորություն:

Պասկևիչը ծավալեց իր «հարգալից» հալածանքները: Հարվածն իջավ 1828 թվականի օգոստոսին, երբ դեռևս այնքան թարմ էին Աշտարակեցու անձնվեր և հերոսական գործունեության հիշողությունները: Եվ ահա Ն. Աշտարակեցին «պատվավոր» աքսորի մեջ է, հայրենիքից հեռու, Բեսարաբիայի մի անկյունում: Բոլոր սև ուժերը համախմբվեցին մեծ հայրենասերի դեմ: Եվ նա միայնակ, գրեթե միայնակ, իր ժողովրդի զապված բարկության և թշնամիների ցնծագին խարդավանքների մեջ գնաց տասնհինգ տարի թաղվելու օտար երկրում: Նա արդեն սկսում էր շատ բան հասկանալ ցարիզմի քաղաքականությունից, որի հետ այնքան լուսավոր հույսեր էր կապել տարիներ շարունակ: 1820-ականների վերջերի ռուս-պարսկական պատերազմի հերոսը 30-ականներին համոզում էր արդեն թիֆլիսյան իր մերձավոր համախոհներին, որ նոր վարչակարգի պայմաններում իմաստազուրկ են հայկական ինքնավարության հասնելու ճիգերն անգամ. **«Ուրիշները ինչ կամենում են ինձ ասել, իրենք պետք է գիտենան: Ես այն եմ, որի մասին ինչպես դուք, այնպես էլ համայն աշխարհն է ճանաչում ըստ իմ գործերի,**— գրում է Աշտարակեցին Հ. Շերմազանյանին 1832 թվականի փետրվարի 27-ի նամակում: —**...Ո՛չ Թուրքիան, ո՛չ Պարսկաստանը և ո՛չ էլ Լեհաստանը չկարողացան հակառակ գնալ ռուսաց հզոր տերությանը, ինչո՞ւ զարմանալ, երբ նույն հզորությունը համաձայն իր կամքի ու նպատակի վարվեց և ինձ հետ. ուրիշները ինչո՞ւ են զարմանում, երբ ես լռեցի այսպես: Հեշտ է ասել, գործով գնա Մոսկվա, գնա Պետերբուրգ, արա այսպես ու այնպես. քաջահայտ է, որ ճնճղուկի ձագուկներն անգամ կարողանում են ճանաչել իրենց թևիկների զորությունը և երբ իմանում են, որ իրենց թևիկները կարողանում են բարձրացնել իրենց, այն ժամանակ ելնում են ու թռչում բներից, իսկ եթե հանկարծ բներից անժամանակ են ելնում, ընկնում են գետնին ու գազանների կերակուր դառնում, միթե՞ ճնճղուկների ձագուկների չափ ես չգիտեմ իմ թևերի կարողությունը, թե երբ կարող են թռչել**[25]:

---

[24] Նույն տեղում, էջ 356—357:
[25] Նույն տեղում, էջ 153—154:

Կախեթի 1812 թվականի նշանավոր ապստամբության և 1832 թվականին իրենց հայրենիքի ինքնիշխանության վերականգնման հետամուտ մի խումբ երիտասարդ վրաց ազնվականների թիֆլիսյան դավադրության հետևանքների փորձով նա տեսնում էր, որ ցարիզմը նորագրավ երկրներում թողնում էր այն, ինչ համապատասխանում էր իր պետականության ոգուն: Ն. Աշտարակեցին գտնում էր, որ լեհական ապստամբությունը արյան մեջ խեղդող ցարիզմը կարող է հայերի նկատմամբ ևս կատարել նույն հաշվեհարդարը, եթե նրանք չկարողանան գիտակցել իրենց թևերի տկարությունը:

Եթե 1820-ական թվականներին, երբ Արևելյան Հայաստանը «Հայկական մարզ» հորջորջմամբ միացվել էր Ռուսաստանին և այլևս պայմաններ չկային խաչեր և նշաններ ձեռք բերելու համար, նա շարունակում էր իր որդեգրած ուղեգիծը և տակավին **«հասոզված էր, թե հայերի ազատությունը պիտի ձեռք բերվի ռուս կառավարության շնորհիվ և այդ ակնկալությամբ ջանք չէր խնայում նորանվաճ երկրում զսպելու ցարական վարչության դեմ հայերի մեջ խմորվող տրտունջներն ու բողոքները»**[26], ապա փոքր-ինչ ուշ, տեղական նորեկ վարչության անիրավություններից սրտնեղված՝ մի կողմից նա բողոքներ էր հղում ցարական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաներին, մյուս կողմից՝ հավաստիացնում ցարիզմի հայ կալանավորներին՝ հավատ ընծայել, չերկմտել կայսերական կառավարության արդարադատությանը[27]:

Ճիշտ է, Սերովբե արքեպիսկոպոսի նման[28], Աշտարակեցին պաշտպան չկանգնեց ցարիզմի լեհական դաժանություններին, բայց միաժամանակ հայերի համար ուսանելի ոչինչ չտեսավ լեհ ապստամբների մոտ: Հայերը նշված ուղիով չպիտի գնան, այն կործանարար է: Ներսեսը հրաժարվում էր ոչ միայն ցարիզմի դեմ կռվելուց (մի բան, որին նա ամենևին էլ պատրաստ չէր), այլև վերջինիս հետ բանակցելու նպատակահարմարությունից՝ «մեծ լռության» մեջ տեսնելով առօրյայի իմաստն ու ոգին: Ն. Աշտարակեցին այլ ուղի չուներ, քանզի պաշտոնական Ռուսաստանի ֆասադային իմպերիայի մակերեսում, գրում էր Գերցենը, երևում էին միայն կորուստներ, մոլեգնած ռեակցիա, անմարդկային հետապնդումներ, բռնակալության սաստկացում: Ամեն ինչ լուռ էր:

Լռեց նաև Ն. Աշտարակեցին: Սակայն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված՝ Ներսեսի «մեծ լռությունը» երբեք չպետք է պատճառ դառնա շեղ արժեքավորելու հայ ազատագրական շարժման գործին նրա մատուցած մեծ ծառայությունները: Ցարական Ռուսաստանն իր գաղութային քաղաքականությունն Անդրկովկասում վարում էր մեծ զգուշավորությամբ, մանավանդ, երբ խնդիրն առնչվում էր հայ ժողովրդին: Նա հարկադրված էր հաշվի նստել պատմական այն իրողության հետ, որ հայ ժողովրդի տարածքի մեծ մասը՝ Արևմտյան Հայաստանը, որտեղ և բնակվում էր հայ ժողովրդի գերակշիռ մեծամասնությունը, շարունակում էր

---

[26] **Աշ. Հովհաննիսյան,** Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 42:

[27] Տե՛ս Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 571, 572:

[28] 1831 թվականի հոկտեմբերի 14-ին Սերովբե արքեպիսկոպոսը շնորհավորում է Պասկևիչի կնոջը՝ կոմսի ղեկավարությամբ լեհական ապստամբությունը ճնշելու և նրան Վարշավայի իշխան կոչումը շնորհելու առթիվ (տե՛ս Կաթողիկոսական դիվան, թղթ. 71, վավ. 176):

գտնվել Թուրքիայի տիրապետության ներքո, իսկ կառավարության ռազմաքաղաքական շահերը պահանջում էին անպայման հաշվի առնել այդ իրողությունը: Նման պարագաները երկվություն էին մտցնում ցարական կառավարության վարած քաղաքականության մեջ, և նա աշխատում էր քողարկել իր գաղութատիրական նկրտումները: Այդ պատճառով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո էլ մեծ մասամբ արտաքին քաղաքական իրադարձություններից էին կախված լինում դեպի հայ ժողովրդի արևելյան հատվածն ունեցած վերաբերմունքի մեջ կատարվող փոփոխությունները: Այս գործոնը հատկապես անթաքույց դրսևորվեց Հայ Եկեղեցու նկատմամբ ցարական կառավարության վարած քաղաքականության գործընթացում:

Հայտնի է, որ պետականության կորստից հետո, դարեր շարունակ Հայ Եկեղեցին էր այն միակ կազմակերպությունը, որ կրում էր համազգային բնույթ և իրար էր շաղկապում ինչպես հայ ժողովրդի տարանջատված և տարբեր պետությունների տիրապետության ներքո գտնվող հատվածները, այնպես էլ այն հայ զանգվածներին, որոնք ապաստան էին գտել աշխարհի զանազան ծայրերում: Պարսկական և թուրքական բռնատիրությունների ժամանակ Եկեղեցին հայ ժողովրդի ազգապահպանության գործում բացառիկ կարևոր դեր էր կատարում: Պատահական չէ, որ ռուսական պետական հեռատես գործիչները տակավին 18-րդ դարի սկզբներից հասկացել էին Հայ Եկեղեցու դերը և դիտում էին այն որպես կարևոր մի ազդակ, որ կարող է մեծապես նպաստել իրենց արտաքին քաղաքականության նպատակադրումներին Մերձավոր և Միջին Արևելքում:

Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի նոր տիրակալը ձգտում էր Հայ Եկեղեցու դիրքն օգտագործել ոչ միայն իր իշխանությունը նորաստեղծ Հայկական մարզում և երկրամասի հայաշատ շրջաններում ամրապնդելու համար, այլև Պարսկաստանի ու Թուրքիայի տիրապետության տակ մնացած և աշխարհի այլևայլ երկրներում ցրված հայ զանգվածների վրա այս կամ այն չափով ազդեցություն նվաճելու նպատակով: Դրա համար անհրաժեշտ էր, որպեսզի Հայ Եկեղեցին ի զորու լիներ պահպանել իր նախկին հեղինակությունն ու դիրքը: Ուստի պատահական չէ, որ Արևելյան Հայաստանի միացումից անմիջապես հետո ցարիզմի քաղաքականության ուշիմ հանձնակատարը՝ Կովկասի կուսակալ կոմս Պասկևիչը, ձեռնամուխ եղավ Հայ Եկեղեցու ներքին հարցերի կարգավորմանը և ցարական Ռուսաստանում նրա տեղի, դերի ու նշանակության որոշմանը: Պասկևիչը Թիֆլիսում ստեղծում է չորս հոգուց կազմված մի գաղտնի հանձնաժողով, որը կոչված էր Հայ Եկեղեցու ներքին կյանքը սահմանող կանոնադրություն մշակելուն:

Հայ Եկեղեցու հարցում ցարիզմի հետամտած նպատակները ցայտուն կերպով բացահայտվում են օտար դավանանքների գործերի նախարար Բլուդովին՝ Պասկևիչի հղած մի նամակից, ուր մասնավորապես ասվում է. **«Այժմ պատրիարք Եփրեմը, թե՛ իր բնավորությամբ և թե՛ իր անձնվիրությամբ Ռուսաստանին դիմադրություն ցույց չի տա այս կապակցությամբ անցկացվելիք բարեկարգումներին և անհրաժեշտ կարգ ու կանոնին: Բայց նրա խորին ծերության պատճառով շուտով երևի նրա տեղը կնշանակվի մեկ ուրիշը, որը կարող է համառ և ըմբոստ անձնավորություն լինել: Այնժամ տերության համար դժվար կլինի հաշտեցնել ընդհանուր օգուտի և հայերի հոգևոր վարչության բարեկարգման իր դիտավորությունները նման**

մի քահանայապետի մասնավոր ձգտումների հետ, քանի որ նա կկսի հոգ տանել սոսկ իր սեփական օգուտների մասին և կկամենա պաշտպանել իր իշխանությունը օտար ամեն մի ազդեցությունից: Նմանապես պետք չէ մոռանալ, որ Էջմիածնում նստող համայն հայոց Պատրիարքը, ըստ հնավանդ սովորության, հայ հոգևորականության պետն է և հոգևոր հովիվը ամենայն հայոց, որոնք սփռված են աշխարհում և որոնք նրան համարում են մասամբ ազգի պետը և գլուխը նաև աշխարհիկ գործերում: Եթե այդ պաշտոնը ստանձնի մի ընդունակ և ձեռներեց անձնավորություն, որ հակամետ լինի խորամանկության և ըմբոստության, ապա, երբ տերությունը ձեռնամուխ լինի հայոց հոգևոր գործերի վարչության բարելավմանը, նա կարող կլինի դիմել Թուրքիայի և Պարսկաստանի հայերին և նրանց միջոցով դիմադրել այստեղի քաղաքական իշխանության բարի դիտավորություններին»[29]: Ահա հիմնականում այս նկատառումներով էր, որ Թիֆլիսի գաղտնի հանձնաժողովը մշակեց Եկեղեցու համար կանոնադրության մի նախագիծ, որը հետագայում վերաքննվեց ու վերամշակվեց Պետերբուրգում և 1836 թվականի մարտի 16-ին հաստատվեց ցար Նիկոլայ Առաջինի կողմից որպես հայ եկեղեցական կանոնադրություն՝ պատմության մեջ հայտնի «Պոլոժենիե» անունով[30]:

«Պոլոժենիե»-ի էության խորքային քննությունը սույն հոդվածի հետաքրքրված նպատակներից դուրս դիտելով, նշենք միայն, որ 1843 թվականին կաթողիկոս հաստատելով Ներսես Աշտարակեցուն, ցարիզմը կամենում էր շահագործել նրա հեղինակությունը թուրքահայերի համակրանքը գրավելու նպատակով և միաժամանակ «Պոլոժենիե»-ի միջոցով սահմանափակել նրա իրավունքները:

Այսուհանդերձ, ինչ-որ չափով հաշվի առնելով «Պոլոժենիե»-ի մասին հայ հոգևորականության կողմից բողոքները, ցարական կառավարությունը հարկադրված էր խոստովանել, թե եկեղեցական այդ կանոնադրությունը ենթակա է վերանայման և որչափ մինչև նոր կանոնադրության հաստատումը, հնի գործադրությունը թողնվում էր կաթողիկոսի հայեցությանը, Ն. Աշտարակեցին ըստ ամենայնի զանց էր առնում «Պոլոժենիե»-ի գործադրությունը և ձգձգում նոր նախագծի մշակումը: Նա չէր լրացնում «Պոլոժենիե»-ի հիման վրա սահմանված Սինոդի կազմը՝ պատճառաբանելով, թե չունի «արժանավոր թեկնածուներ», կամ ամլության էր մատնում Սինոդի գործունեությունը՝ չհաստատելով նրա արձանագրությունները: Ներքին գործերի նախարար Լանսկոյը «բացատրություն» էր պահանջել Ներսեսից նրա մի կարգադրության առթիվ, որի մասին գանգատվել էին նախարարությանը: Լեցուն իր արժանապատվության և իրավունքների գիտակցությամբ, Աշտարակեցին հրաժարվեց ներկայացնել պահանջված «բացատրությունը» հետևյալ պատճառաբանությամբ. «**Դուք, ողորմած Տէր, վերաբերէք առ իս որպէս առ ուղղակի և անընդմիջական ստորադրեցեալ Ձեզ աստիճանաւոր, քանզի ի հետևումն այնինչ գանգատանաց հաճիք գրել առ իս այսպէս՝ «հաստատանել ինձ բացատրութիւն», այլ կարծես, թէ ես եմ որպիսի և իցէ գիւղաքաղաքապետ... Նախարարն կարէ և պարտ է պահանջիլ ի կաթողիկոսէն ոչ բացատրութիւն** (объяснение), **այլ միմիայն ծանոթու-**

[29] «Акты, собранные Кавказской археографической комиссией» Т. 7, № 214.

[30] «Հայ ժողովրդի պատմություն», հատոր 5, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974, էջ 212:

թիւն, քանզի և գլխոց օծելուց զբացատրութիւն կարէ պահանջել, որպէս ինձ թուի, միմիայն թագաւորն և անուանանշան նորին հարաման[31]**:** Ներսեսը բողոքում էր ցարի առաջին ուտիկանապետի միջամտության դեմ, որչափ նա Նոր Նախիջևանի եկեղեցական գումարների խնդրում գրավել էր որոշ դիրք, առանց նախապես հարցնելու իր և Սինոդի կարծիքը: Դյուրին չէ գերագնահատել նաև Ն. Աշտարակեցու դերը բոլոր կարգի միսիոներների, աղանդների, հոգեորսների դեմ մղվող պայքարում: Բանն այն է, որ 19-րդ դարի հատկապես 40—50-ական թվականներին կաթոլիկների, բողոքականների և լուսավորչականների միջև մղվող պայքարը մեծ ծավալ ստացավ հատկապես Կ. Պոլսում և Թուրքիայի ծովափնյա մյուս քաղաքներում: Եվ դավանաբանական վեճերը խիստ բացասական դեր խաղացին օսմանյան կայսրության տիրապետության տակ հեծող արևմտահայության սոցիալ-քաղաքական կյանքում: Հիշենք հասունյան-հակահասունյան պայքարը, չմոռանանք նաև, թե հայերի կաթոլիկացման գործում ինչ նողկալի դեր էր կատարում Վատիկանը և Ֆրանսիան: Եվ ոչ միայն: Կ. Պոլսի հայոց Պատրիարքը բազմաթիվ դիմումներով ու գրություններով բողոքում էր Ն. Աշտարակեցուն, որ ինքը չի կարող արգելել բողոքականության տարածումը, քանի որ նրանց հովանավորն է անգլիական դեսպանը:

Միսիոներական շարժման տարածումը բողոքի ալիք առաջ բերեց Կ. Պոլսի հայ մտավորականության մեջ: Մ. Պեշիկթաշլյանը և Ա. Հայկունին գրեցին մի շարք հոդվածներ: «Մեղու»-ն հոդվածաշարով քողազերծ արեց բողոքականների դեմքը, արևմտահայությանը թախանձեց հեռու մնալ «վարակիչ այդ ախտից»:

Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը հատուկ կոնդակով հայ ժողովրդին կոչ արեց զոհ չգնալ եվրոպացի և ամերիկացի քարոզիչների «մեղրածոր լեզվին», քանզի դրանով պառակտվում է ողջ արևմտահայությունը, իսկ դա ձեռնտու է սուլթանական կառավարությանը, որը մերթ պաշտպանելով համայնքներից մեկին, մերթ՝ մյուսին, հարմար առիթով վնասում և ի վերջո հարվածում է երկուսին էլ:

Լինելով իր հոտի, իր հայրենիքի հայ լուսավորչական Եկեղեցու ջերմ պաշտպան՝ Ն. Աշտարակեցին օգտագործեց բոլոր հնարավոր միջոցները՝ ազգային համախմբման գործը կազմակերպելու և մեր պատմական անցյալի ու ներկայի անջատված օղակը ամրակայելու համար: Նա ընդառաջում և ոգևորում էր այդ նպատակին ծառայագրված բոլոր հայ գործիչներին, իսկ վերջիններս իրենց ձեռնարկների համար սրբազան պարտք ունեին հաշվետու լինել Ներսեսին: Ուշագրավ է ռուսական նավատորմի փաստաբանված ծովակալ, հայ ժողովրդի հայրենասեր զավակ Լազար Սերեբրյակովի և Ն. Աշտարակեցու նամակագրական կապերը, կապեր, որոնց նպատակը լեռներով մեկ ցրված և Տրապիզոնից եկող հայերին Նովոռոսիյսկում և Անապայում համախմբելն էր, ամփոփ հայկական համայնքների ստեղծումը: Նկատի ունենալով Նովոռոսիյսկ բնակության բերված չերքեզահայերին՝ Ն. աշտարակեցուն 1850 թվականի մարտի 22-ին հղած նամակում Լ. Սերեբրյակովը գրում է. **«Թէ որքան հնար իցէ ըստ իմում կարողութեան, ջանացից մերձաւորել այն չերքէզահայք առ սուրբ Եկեղեցին հայոց, որք կորուսեալ**

---

[31] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 2946, թերթ 125բ:

են զճշմարիտ հաւատս և զդաւանութիւն նախահարց իւրեանց հանգամանօք զկնի բազում ամաց անցելոց»[32]:

Հայոց անցյալի և իրօրյա հասարակական կյանքի երևույթների ընկալմամբ Աշտարակեցին իմաստասեր պատմաբանի էր նման, կարողանում էր իրողությունները ստորադրել հավաքական հայության շահերին՝ ներուժ ունենալով Եկեղեցիով գոտեպնդված «ազգի» հեռանկարները: Հանուն այդ հեռանկարների էլ նա Ռուսաստանն ընկալում էր իբրև մի ամբողջական երկիր՝ զերծ միջֆեոդալական ներքին երկպառակություններից, գերադասում ռուսական օրենքներն ու պետական կարգերը, դրանք համեմատում արևելյան բռնատիրությունների հետ և մատնանշում Ռուսաստանի կազմում հայ ժողովրդի կացության առավելությունները:

Նա խիստ վնասաբեր էր համարում արևելահայերի շրջանում ընբռստություն խմորող տրամադրությունները և մասնավորապես հակակրանք ուներ հասարակության մեջ դասային շերտավորման խորացող գործընթացները դիտարկողներին: Եվ դա բնական է: Ն. Աշտարակեցին կաթողիկոս էր, ուրեմն նաև՝ ազգային համերաշխության կողմնակից և հասարակական ներդաշնակության ջատագով: Նա իր ժողովրդի համար կատարեց այն ամենը, ինչ չափով հնարավոր էր ու թույլատրում էր ժամանակը: Հայ ժողովրդի հանդեպ տածած Ն. Աշտարակեցու սերը պլատոնական չէր: Նա ոչ միայն ցանկացավ, այլև ցանկություն իրական դարձնելու համար իր որդեգրած ճանապարհին բավարարից շատ ջանքեր գործադրեց, որպեսզի հայ ժողովուրդը լինի ավելի զգաստ և գիտակից, պատմական շրջադարձերի բոխտորոշ պահերին աչքի ցույսի պես պահի ռուս ժողովրդի հետ գործակցության «դաշնը» և չենթարկվի հասարակական հանգիստը խաթարող՝ դրսից կամ ներսից եկող կանխամտածված գրգռումներին, որոնք միայն ջուր կլցնեին մեր դարավոր թշնամու ջրաղացին: Բնորոշ է, որ երբ 1823 թվականին անգլիական գործակալ Վուլֆը խնդրեց Ներսեսի աջակցությունը հայերի հետ «մտավոր կապեր» ստեղծելու համար, վերջինս կտրականապես մերժեց բրիտանական գաղութատիրության և հակառուսական հանձնակատարի առաջարկությունը:

Մեկ հոդվածում, թող որքան էլ լինի այն ընդարձակ, հնարավոր չէ սպառել Ներսես Աշտարակեցու նման անհատականության կյանքն ու գործը: Կարծում եմ, սակայն, որ հակիրճ այս շարադրանքից դյուրին է նկատել, որ Ներսեսի գործունեության յուրաքանչյուր շրջափուլը պարունակում է իր մեջ հայ ժողովրդի կացությունն ընբռնելու կամ կացությունից ելք գտնելու համար պատմական կոնկրետ հանգամանքներում նրա գործադրած ջանքերի խելամիտ ու նպատակասլաց դրսևորումը: Ազգային ու եկեղեցական այն գործիչն էր նա, որի հորդ եռանդն ու դիվանագիտական խառնվածքը տոգորված էր հայրենի երկրի բարօրության նկատմամբ ունեցած անկեղծ ձրգտումով և ազատաբաղձության խորքունկ կշռադատվածությամբ:

Ներսես Աշտարակեցին ապրեց իր ժամանակը չափազանց լրիվ, չափազանց բուռն ու անձնվիրաբար, իսկ 1857-ին մահանալով՝ անմահացավ բոլոր ժամանակների համար: Նա պատկանում է հայոց այն անմահների շարքին, որոնք կանգ չեն առնում այնտեղ, ուր վրա է հասնում նրանց մա-

---

[32] Տե՛ս **Վ. Ա. Միքայելյան,** Ղրիմահայոց պատմություն, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1989, էջ 387:

հը, այլ շարունակում են ապրել իրենց ծնող ժողովրդի երախտապարտ սերունդների արարումներում: Դրանով նրանք մտնում են այն անմահների շարքը, որոնց կյանքն ու գործը չի ծածկվում ժամանակի կնճիռներով և չի ավերվում ժամանակի հոլովույթից:

Այս է Ներսես Աշտարակեցու՝ «Պաշտպան հայրենյաց»-ի կյանքի ու գործի արդիական խորհուրդը:

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու